ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

9 փետրվարի 2012թ. թիվ 40

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ “ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ” ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի “ա” ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006թ. մարտի 15-ի թիվ 147-Ն հրամանով հաստատված «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի անցկացման կարգը.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթ անցկացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. փետրվարի 9
ք.Վանաձոր